



# Ժամանակը

Դու ես կերտում քո ժամանակը:  
Համոզված եղիր՝ տարիներ հետո  
Քո կերտած ժամանակը լավն է թվալու...

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

## Միջոցի՝ համալսարանական

Ես «Քո ժամանակն» եմ: Ուսում եմ դառնալ քո ընկերը: Խոստանում եմ, որ մեր սրտիցները չեն սահմանափակվի միայն համալսարանին վերաբերող թեմաներով: Իմ միջոցով կրեսեսս քո ժամանակի հեղաքրքիր մարդկանց, առհասարակ, խոստանում եմ՝ ինձ հետ չես ձանձրանա: Հուսամ՝ սպասված հյուր կլինես:

## ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐ Մ.ՄԻՆԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԿԱ ԱՌԹՎ



Միջոցի՝ ուսանողներ, ջերմորեն շնորհավորում եմ ձեր տոնը և հաջողություններ մաղթում ուսման առաքելքում:

Լավ մասնագետ դառնալու ձեր նպատակադրումն ու դրա հետևողական իրականացումը ոչ միայն ընդլայնում է ձեր աշխարհաճանաչողությունն ու նոր հորիզոններ բացում ձեզ համար՝ բավարարելով ձեր հոգևոր և նյութական պահանջները, այլև կանխորոշում բարեկեցության և գիտակցության աստիճանն այն ազգի ու հասարակության, որի անդամն այսօր հանդիսանում եք:

Դուք այսօր երիտասարդության սերունդն եք, ում ուներին դրված է ազգի ապագայի կերտման խնդիրը: Ի վերջո, պետք է գիտակցել, որ չկա վատ և լավ մասնագիտություն, կա լավ և վատ մասնագետ, ուստի հորդորում եմ ձեզ գիտելիքների յուրացման ու մասնագիտական ունակությունների բացահայտման հարցում նախանձախնդիր ու հետևողական լինել:

Ցանկանում եմ, որ ամեն վայրկյան զգաք ուսանող լինելու երջանկության բերկրանքը, հետևեք կյանքի ճշմարիտ արժեքներին ու գտնեք ճշմարիտ ուղին:



## ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՆ ԱՐՊՀ-ՈՒՄ

ԱրՊՀ ռեկտորատի, ՈւՀՏԱ, ՀԿ և Լ բաժնի կողմից նոյեմբերի 21-ին կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված Ուսանողների միջազգային օրվան, որ կայացավ մի քանի օր ուշացումով՝ ի նշան հարգանքի նոյեմբերի 12-ին աղբյուրական գործերի կողմից խոցված ուղղաթիռի զոհված անձնակազմի հիշատակի:

Միջոցառմանը ներկա էին ԱրՊՀ ռեկտոր Մ.Մինասյանը, պրոռեկտորներ, դեկաններ, ռեկտորատի այլ անդամներ, հյուրեր ԼՂՀ կառավարությունից, կրթության և գիտության, Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություններից, Սպորտի պետական տեսչությունից, ՀՕՄ-ից, բարերարներ, ուսուցիչներ, ուսանողներ:

Բացելով միջոցառումը՝ ռեկտոր Մ.Մինասյանն անդրադարձավ տոնի խորհրդին ու նրա նախապատմությանը և հույս հայտնեց, որ առաջիկայում մեր տոնացույցում կավելանա նաև ուսանողների ազգային օր: Մ.Մինասյանը, երկրի զարգացման ու բարգավաճման երաշխիքը գիտելիքն ու կրթությունը համարելով, ընդգծեց բուհական համակարգի և ուսանողության դերը. «Այսօր դուք ապրում եք ձեր կյանքի ոսկե շրջանը: Սրանք այն տարիներն են, որի ընթացքում դուք պետք է ամբարներ գիտելիքներ և հետագայում ծառայեցնեք ի բարօրություն ազգի և ազգային: Եղե՛ք միշտ բարեխիղճ, միշտ նախաձեռնող, միշտ հետևողական, քանզի միայն այս հատկանիշներով օժտված սերունդը կարող է կայացնել և զարգացնել մեր պետությունը»:

ԱրՊՀ հիմնադրման 45-ամյակին նվիրված միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու և ուսանողի միջազգային օրվա կապակցությամբ ԱրՊՀ ռեկտոր Մ. Մինասյանը ստորագրել էր հրաման՝ մի խումբ ուսանողների խրախուսման վերաբերյալ:

ԼՂՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի փոխնախարար Լ. Հովհաննիսյանը, ԿԳ ներկայացուցիչ Լ. Ղարախանյանն ու Սպորտի պետական տեսչության պետ Բ. Ղարաբաշյանը նախարարությունների և տեսչության անունից շնորհավորեցին ուսանողներին տոնի կապակցությամբ՝ մաղթելով «սկզբունքների մեջ լինել անկոտրում ու անկողմնակալ, նպատակների մեջ՝ կողմնորոշված» և «կարողանալ շարունակել այն բարի

ավանդույթները, որ տարիներ ի վեր ձևավորվել են մայր բուհում»: Հյուրերը դատարկածեռն չէին եկել: Նրանք խրախուսական նվերներ ու պատվոգրեր հանձնեցին նախարարությունների և սպորտի կոմիտեի կողմից կազմակերպված միջոցառումներին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ԱրՊՀ մի խումբ ուսանողների:

Խրախուսական նվերներ ու գնահատագրեր հանձնելուց անման չմնաց նաև Արցախի ՀՕՄ-ի միավորը: «Լավագույն ուսանող» ծրագրի շրջանակներում ՀՕՄ-ի կողմից ԱրՊՀ 5 ուսանողների հատկացվել է 100-ական ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

«Կապիտալ մարկետ» ՍՊԸ համասեփականատերեր Ա. Լալայանի և Ա. Կարապետյանի կողմից Ուսանողության միջազգային օրվա կապակցությամբ դրամական միջոցներ են հատկացվել ԱրՊՀ մի խումբ ուսանողների՝ ուսման վարձավճարների մասնակի մարման համար:

ԼՂՀ կառավարության կողմից ԱրՊՀ ուսանողներին նյութական աջակցության համար հատկացված միջոցների հաշվին ուսանողության միջազգային օրվա կապակցությամբ, համաձայն ռեկտորի ստորագրած հրամանի, կկազմակերպվի եռօրյա այցելություն ՀՀ տեսարժան վայրեր՝ հասարակական ակտիվություն ցուցաբերած, և այցելություն ԼՂՀ տեսարժան վայրեր՝ ուսանողների օրվան նվիրված միջոցառմանն ակտիվորեն մասնակցած մի խումբ ուսանողների համար:

Միջոցառումը եզրափակվեց ԱրՊՀ տարբեր ֆակուլտետների ուսանողների ուժերով և անմիջական մասնակցությամբ կազմակերպված երաժշտական-գեղարվեստական մասով: Ուսանողները երաժշտական, պարային, հումորային կատարումներով և ասմունքով մի գեղեցիկ հրավառություն էին կազմակերպել: Գունեղ ու ոգևորիչ էր ԱրՊՀ ՈւՀՏԱ անդրանիկ ելույթը: Համար 8 ավագ դպրոցի աշակերտների ազգագրական պարերի կատարումները ևս անտարբեր չթողեցին հանդիսատեսին:

Անուշ Դոլուխանյան  
ՈւՀՏԱ, ՀԿ և Լ. բաժին



## ԲԵՐՔԱՌԱՏ ՆՈՅՆՄԲԵՐԸ

Նոյեմբերը առատ ամիս է: Առատ է, նամանավանդ, ԱրՊՀ ուսանողների համար: Այս ամսին նշվում են 2 շատ կարևոր տոներ՝ ԱրՊՀ 45-րդ տարեդարձը, և Ուսանողների միջազգային օրը: Միախառնելով այդ երկու տոները՝ ցանկանում ենք ուսանողների կողմից մաղթանքներ հղել ԱրՊՀ-ին:

Եվ այսպես, մաղթում են ԱրՊՀ-ում սովորող լրագրողները

Ցանկանում ենք մեր ձեռքբերումներով նորանոր հաջողություններ գրանցել համալսարանի կյանքում:

*Նոննա Գևորգյան*

Համալսարանի 45-րդ ամյակի կապակցությամբ ցանկանում ենք բերուն գիտական ու ստեղծագործական աշխատանք: Լինելով չճանաչված երկրի բուհ՝ կցանկանայի, որ նաև համալսարանի կատարած աշխատանքների շնորհիվ Արցախի Հանրապետության ճանաչման հարցը ստանա իր դրական լուծումը:

*Մանուշ Առստամյան*

Ցանկանում ենք, որ ԱրՊՀ-ն միշտ էլ կրթի Արցախի երիտասարդ սերնդին: Թող այդ ճանապարհին յուրաքանչյուր խոչընդոտ դառնա մի նոր հաղթանակի նախապայման:

*Աննա Բալայան*

Մա՛յր համալսարան, դարեր շարունակ մնալու ես այն կայուն հիմքը, որի վրա հենվում է անկախ Արցախի ապագան:

*Թամար Հարությունյան*

Ցանկանում ենք ԱրՊՀ-ին միայն հաջողություններ իր առաքելություններում, ինչպես նաև ուսուցանվող մասնագիտությունների ընդլայնում:

*Նանար Ծատրյան*

Ցանկանում ենք նորանոր բարձունքների գրավում: Թող աշխարհում առաջնորդվեն մեր բուհի սահմանած կրթական չափանիշներով:

*Դիանա Հակոբջանյան*

Յուրաքանչյուր ուսանողի քայլը դեպի Մայր բուհ թող միշտ նպատակային լինի:

*Մելինե Մուսայելյան*

Թող երիտասարդները լինեն ԱրՊՀ-ի շունչը: Թող նրա դռներից դուրս գա միայն գիտակից սերունդ:

*Տաթև Միրզոյան*

Հնտադարձ հայացք գցելով Մայր բուհի անցած ուղուն՝ փաստենք, որ հիմնադրված լինելով մի շատ բարդ ժամանակաշրջանում՝ համալսարանն իր ողջ կենսագրության ընթացքում եղել է մեր ժողովրդի հավատարիմ ու գորավիզ ուղեկիցը: Կցանկանամ միայն պայծառ ապագա: Ծնորհավո՛ր տո՛նդ, մայր համալսարան:

*Մարիամ Ավետիսյան*

Միավորելով ջերմ ցանկությունները՝ վստահություն ենք հայտնում, որ այն բոլոր հաջողություններն ու նվաճումները, որոնք գրանցել է Մայր համալսարանը, նրա երկար ուղու առաջին քայլերն են: Արցախի պետական համալսարանը չպետք է դադարեցնի իր հաղթական երթը Արցախի Հանրապետությունում:

*ԱրՊՀ Լրագրություն II*

## ԱՐՊՀ–ՈՒՄ ԾԱՆՈԹՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԱԾ Է



Տարիներ ի վեր ԱրՊՀ-ում ձևավորվել են բարի ավանդույթներ: Այդ շարքին կարելի է դասել ծանոթության երեկոները, որոնց հիմնական նպատակը առաջին կուրսեցիներին ծանոթացնելն է ավագ կուրսերի ուսանողների հետ:

Այս ուսումնական տարում էլ արդիական և պահանջված էին ծանոթության երեկոները:

\*\*\*

Նոյեմբերի 12-ին տնտեսաիրավաբանական ֆակուլտետի ուսանողները կազմակերպել էին ուսանողական ծանոթության երեկո:

Տնտեսաիրավաբանական ֆակուլտետի երեկոյին ներկա էին ՈՒԾՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը, տնտեսաիրավաբանական ֆակուլտետի դեկան Ռ. Մանգասարյանը, ամբիոնի վարիչներ, դասախոսներ:

Ֆակուլտետում ձևավորված ավանդույթի համաձայն՝ դեկան Ռ. Մանգասարյանը շնորհակալագրեր հանձնեց ինչպես հասարակական ակտիվություն, այնպես էլ տնտեսաիրավաբանական ֆակուլտետի 25-ամյակի շրջանակներում կազմակերպված միջոցառումներին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ուսանողներին:

\*\*\*

Նոյեմբերի 18-ին արդեն չորրորդ անգամ հայոց լեզվի ու գրականության և օտար լեզուների և ճարտարագիտության ֆակուլտետները ծանոթության երեկո են կազմակերպվել են համատեղ ջանքերով:

Երկու ֆակուլտետների համատեղ ծանոթության երեկոյի հյուրերն էին ՈՒԾՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը, դեկաններ, ամբիոնի վարիչներ, դասախոսներ, հյուրեր:

Երեկոն հազնեցած էր տարբեր ժամանակների գունդ պարային կատարումներով:

Անուշ Դոլուխանյան  
ՈւՀՏԱ, ՀԿ և Լ. բաժին



...Մենք բոլորս էլ գիտենք հայտնի արտահայտությունը՝ ուսանողը միշտ իրավացի է... Այս սկզբունքը հաշվի առնենք ու տեսնենք ինչ է ստացվում...

\*Ուսանողը չի քնում - ուսանողը սովորելուց հանգստանում է ...

\*Ուսանողը շատ չի ուտում-ուսանողը իր ուժերն է վերականգնում...

\*Ուսանողը չի սխալվում-ուսանողը ընդունում է ռիսկային որոշումներ...

\*Ուսանողը սխալ չի գրում-ուսանողի շպառգալկեն ա սխալ լինում...

\*Ուսանողը չի խաբում-ուսանողը լավ դիվանագետ է...

\*Ուսանողը միացնում է ուսանողը ուղեղի ծանրաբեռնում ավելորդ ինֆորմացիայով...

\*Ուսանողը վախկոտ չէ-ուսանողը ամեն ինչ անում է նախօրոք լավ մտածված...

<http://www.copypaste.am/>



- Ինչպիսի՞ն է ձեր նոր դասախոսը:

- Շատ աստվածապաշտ մարդ է:

- Ինչի՞ց ենթադրեցիք:

- Երբ որ ես պատասխանում եմ նրա հարցերին, ձեռքերի ավերակները լուրջ է՝ դասախոսն ասաց. «Տեր աստված, Տեր աստված»:

\*\*\*\*\*

Դասախոսը, չկարողանալով անգրագետ ուսանողին բավարար գնահատականի ձգել, հարցնում է.

- Լավ, գոնե կարո՞ղ ես ասել, թե ամբողջ կիսամյակի ընթացքում ով էր կարդում դասախոսությունները: Ուսանողը լուրջ է՝ դասախոսն ասաց.

- Հուշող հարց եմ տալիս. ե՞ս, թե՞ դու...

\*\*\*\*\*

- Ինչպե՞ս է թարգմանվում «I don't know»

- Ես չգիտեմ:

- Այ բեզ բա՛ն, ոչ ոք չգիտի...

\*\*\*\*\*

Ուսանող տղան SMS-հաղորդագրություն է ուղարկում մորը. «Քննությունները չհանձնեցի, պապային նախապատրաստիր»: Մի ժամից ստանում է պատասխանը. «Պապան պատրաստ է, դու նախապատրաստվիր»:

\*\*\*\*\*

1-ին կուրս - Վե՛րջ, հաստատ կհեռացնեն...

2-րդ կուրս - Կա՞րող է չհեռացնեն: Չե՛, կհեռացնեն...

3-րդ կուրս - Հիմա դժվար թե հեռացնեն...

4-րդ կուրս - Հաստատ չեն հեռացնի...

5-րդ կուրս - Մի հատ թող փորձեն հեռացնել...

\*\*\*\*\*

Ինչպես ասաց Լենինը, «Սովորե՜լ, սովորե՜լ...Սովորելը ավելի լավ է, քան աշխատե՜լ, աշխատե՜լ ու աշխատե՜լ» ...



## ՇԱՐԱԹՈՐՅԱԿ ՀԱՆՐԱԿԱՅԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 18-ին ՈՒՀՏԱ, ՀԿ և Լ բաժնի մեթոդիստ Լուսինե Գրիգորյանի նախաձեռնությամբ ԱրՊՀ հանրակացարանում կազմակերպվեց շաբաթօրյակ, որին մասնակցում էին հանրակացարանում բնակվող ուսանողները: Շաբաթօրյակն անցկացվեց մրցույթի տեսքով:

Գնահատող հանձնաժողովի կազմում էին ՈՒԾՀՏԱ-ի գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը և ՈՒՀՏԱ ՀԿ և Լ բաժնի պետ Ն. Աբրահամյանը, հանրակացարանի պարետ Ա. Հայրիյանը: Հանձնաժողովի անդամները, շրջելով հանրակացարանի

սենյակներով, խրախուսեցին մաքրասեր ուսանողներին:

Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր սենյակն արժանացնել «լավագույն սենյակ» կոչմանը: Գրեթե բոլոր սենյակներն էլ մաքրության տեսակետից (յուսամուտ, կոկիկ հարդարված մահճակալ, սենյակում և մասնաբաժնում դուրեկան հոտ) գնահատվեցին դրական, և նախօրոք պատրաստված նվերներով պարգևատրվեցին բոլոր մասնակիցները:

Անի Խաչատրյան  
ՈւՀՏԱ, ՀԿ և Լ. բաժին

